

24604

891.99

14-23

ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

ՆՈՒՆԻՐ



ՎԱԴԱԹԱՌԱՄ ՕՐԻՈՐԳ


ԽՐԻՍՏՈՆԷ Մ.

ԽԱՆԳԱՄԻՐԵԱՆԻՆ

Վշտահար ծնողից.

226

891.99
Խ - 23



Тип. „Экономія“, Мугдуси-Акснова, Б.-Банк, ул. д. №3
ТИФЛИСЪ

891.99

11-23

Ա. Մ.

Վ. 59

ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

ՆՈՒԷՐ



ՎԱՂԱՐԱՌԱՄ ՕՐԻՈՐԴ

ԽՐԻՍՏԻՅԷ Մ.

ԽԱՆԳԱՄԻՐԵԱՆԻՆ

Վշտահար ծնողից.

7003



Типографія Экономія, Бол.-Банкская ул. д. № 3
ТИФЛИСЬ

ԽՐԻՍՏԻՆԷԻՆ

Հագար բառերից չեմ գտնում մէկ բառ,
Արտայայտել քեզ հոգոյս զգացմունք.
Աշխարհի կեանքից զգուել եմ իսպառ.
Ալեկոծում ինձ իմ մտքիս յուզմունք:

Դու՛ թափառական վարձած, սիրելի՛
Համբերութեամբ տար չարչարահաց խաչ,
Թէպէտ այդ վիճակ քեզ չէր արժանի,
Թող քեզ հովանի լինի Աստուծոյ աջ:

Այս բառեր անա, բխած իմ սրտից.
Նուիրում եմ քեզ՝ որպէս մէկ ուղերձ,
Թող չը պատճառեն քո սրտին կակիծ,
Այս ծաղկեայ փունջը քո թշուառ հօրից:
1906.

326 24-Ա. Դ.



(5-4138
49)

15903-58

Handwritten signatures and numbers at the bottom left, including '29' and '38'.



Ձայն հառաչանայ հեծութեան սրբի,
ողբոց աղաղակի, Բեզ վերնծայեմ
Տեսող գաղտնեաց:
«Նարեկ»

Handwritten numbers and scribbles at the bottom right, including '15903'.

ՈՐ ԵՒ ԳԻՂԵՐ

Արեւելքում կարմիր ամպեր,
Երկինք երկիր հրավառ,
Արշալոյս է աւետարեր,
Արև ծագում հրաշափառ:

Մայր-Արարս առաւօտեան
Ազամանդեայ հագուստով,
Նորահարսի համանման՝
Դիմում գոււարթ դէպի ծով:

Շողշողում են էջմիածնի
Դմբեթների ջինջ խաչեր,
Երևում են հայոց երկրի
Քաղաք աւան և գիւղեր:

Օձապտոյտ գետ-առուներ,
Քայլամուր հոսում են,
Բուրում շուրջս անուշ հոտեր,
Երգում պէս պէս թռչուններ:

Անտառ լիճեր և այգիներ
Արարատեան մեծ դաշտի,
Չեն սփոփում սրտիս վիշտեր,
Ինձ թփում են ցնորքներ:

Գիշեր դարձաւ, մութը պատեց,
Փոխվեց պատկեր բնութեան,
Հորիզոնը ընդարձակվեց,
Պարզվեց մէկ այլ տեսարան:

Բացուին դռներ անհնուլթեան,
Անեղր, անվերջ անսահման,
Միտքս, հոգիս, սլացան ի վեր՝
Մտին ի ծոց բնութեան:

Քանի քանի բիւր մարմիններ
Փայլում են վեհ կամարում,
Մեծ Արարչի լոյս լապտերներ՝
Յոյս արծարծում սրտերում,

Խորհուրդաւոր գիշերվայ մէջ,
Աստղագարդ երկնքում,
Այդ վրանում Աստուածաստեղծ,
Մեր հոգիներ են հանդչում,

Գիշերը ունի տիեզերքում՝
Ջարմանահրաշք տեսիլներ,
Երևում են մութ խաւարում՝
Արարչութեան մեծ գործեր:

ԾՈՎԻ ԲՈՂՈՒԲԸ

Իմ բնակարան ծովի եզերքում,
Ապառաժների վրա է շինուած.
Ահա վեց տարի այլ բանտի միջում,
Անցնում սև օրեր՝ կենդանի մեռած:

Անողորմ վճիռ դատաւորների,
«Տասն մէկ տարի բանտարկուած մնալ»
Մարդասպան էի, ոճրագործ էի.
Խիստ չէր այդ պատիժ և անակնկալ:

Ես անցնում էի մէկ օր փողոցով,
... ծեծում էր կոյրին,
Անչափ զայրացած. մուրկված մտքով,
Ապտակ տուի ես նրա երեսին.....

Սարսեց և զողաց համայն բնութիւն,
Ապտակ... ինչ յանդգնութիւն:
Գորած է խիղճ. և կարեկցութիւն,
Չը կայ մեր դարում մարդասիրութիւն:

Գողում կոչում են ծովի ալիքներ,
Չայրացած իսպառ ընդդէմ մարդկութեան.
Փակված, չեմ տեսնում ալեաց փրփուրներ,
Բայց և լսում եմ նրանց բողոքներ:

— «Հրէշ է մարդը և միշտ անարդար»
«Որ չունի ոչ գուլթ, ոչ օրէնք արդար»
«Մեր ալիքներով այդ ցեղի վրա»
«Կապտակենք, թքենք հարիւրաւոր դար»

ԵՐԿՈՒ ԴԱԳԱՆ

Նա կարիք չունի ոչ ձեր արցունքի,
 Եւ ոչ պսակի և ծաղիկների.
 Մեռաւ... գոհ դարձաւ... անգութ ծնողներ,
 Հնազանդվելով ձեր հրամանին:

Նա կարիք չունի ոչ մուգիկայի,
 Եւ ոչ հոգևոր երգեցիկ խմբի,
 Դուք չէք հայր և մայր, վատ քան դահիճներ,
 Թուաւ... գոհ եղէք յագահ ծնողներ:

Դուք խոշխոշոզ էք սիրահարների.
 Նայեցէք այն տեղ, վատթար ծնողներ.
 Ահա տանում են դազալ ուրիշի,
 Դարձեալ հետևանք ձեր կապրիզների:

Ձեր միակ աղչիկ հեզ էր ու բարի,
 Ձեր կամենում կին լինէր ուրիշի,
 Կամրին հակառակ, հարուստ փնտռեցիք
 Տուրիք յիսունամեայ Գիգոյին գերի:

Մաշուեց իր վշտից հնազանդ Մարին,
 Որք սիրում էր ուսուցիչ Հայկին,
 Ինքնասպանութեամբ առ էլ վերջ տուաւ՝
 Մարիից յետոյ իր թշուառ կեանքի

Տարէք գերեզման յանձնեցէք հազին,
 Այդ երկու դազաղ՝ Մարիին — Հայկին.
 Դէ գուարճացէք անգութ գազաններ,
 Մառն գետնի տակ, թող միաւորվին:

. ին-

Երկրի վրա քնքուշ սեռում՝
Բարոյական քեզ նման.

Լեռանց վրա ծաղիկներում՝
Անուշահոտ քեզ նման.

Լուսաճաճանչ ովկիանոսում՝
Փայլուն աստղ քեզ նման,

Համայն բնութեան էակներում՝
Չը գտի մէկը քեզ նման:

1905. ԱՐՅՈՒՆՔ ԵՒ ԽԱԶ

Գնում հայրենիք մտքով մուրդովս,
Ձիերը ձգում կառքս դէպ առաջ.

Մտաբերում եմ անցած սև օրեր,
Սակայն ինձ համար ամէն ինչ մեռած,

Օր է մայիսվայ, օր հրաշայի,
Այ ու ձախ ընկած շղթայ լեռների,
Քիրս, Մուս տխուր նոր վշոով լցուած,
Սիպտակ սաւանով գլուխներ ծածկած:

Ջրեղ բնութեան անման պատկեր՝
Աչքիս երևում որպէ՛ս սև ամպեր.
Որդեկորոյս մօր համար ինչ հրճուանք.
Երբ սրտի միջում ցցուած են սրեր:

Գառքս կանգնում է մէկ գիւղի առաջ,
Ես անչափ յուզված, քաշում եմ թառանչ,
Իմ հանդէպ կանգնած մէկ խումբ թիւրք կանայք՝
Ձգեցին վրաս անախորժ հայացք:

Սառսուր ինձ բռնեց, երբ նրանց միջում՝
Հրեշտականման մէկ կին էր փայլում.

Հայի դէմք ունէր՝ նա ինձ ակնարկեց,
Ծածուկ խաչհանեց՝ արցունք աչքերում:

Քանի այդպիսի հայ կին և աղջիկ,
Թուրքերի ձեռքին ընկած են զերիք,
Իմ վշտին վրա՝ եկաւ մի նոր ցաւ,
Թշուառ հայրենիք, զժբանգ հայունիք:

1905. Թիւր

Անիծեալ տարի,
 Գազան անմեհի,
 Կարճ էր քո կեանքը,
 Չի եղիր բարի:
 Ի՞նչ մտածեցիր,
 Եւ ի՞նչ շահեցիր,
 Որ անթիւ մարդկանց
 Տներ քանդեցիր:
 Արիւն ցանեցիր,
 Գիւղեր այրեցիր,
 Բազում զիականեր,
 Անթաղ թողեցիր:
 Մենք թշուառացիք,
 Հոգսի մէջ ընկինք,
 Մէկ կոտոր հացի՝
 Կարօտ մնացինք:
 Չառ ընտանիքներ՝
 Իրենց տուն տեղեր՝
 Թողին և դարձան
 Միշտ գաղթականներ:
 Հեծ-սուգ քցեցիր,
 Չան պէս սատկեցիր,
 Ցաւիտենական՝
 Անուն թողեցիր:

Մէր ԵՒ ԵՐԴՈՒՄ

1905.

Սօնան չքնաղ գեղեցիկ,
 Քարոյական մէկ աղջիկ,
 Հաստատ մնաց իր երգումն:
 Ինձ չը խաբեց յաւիտեան:
 Երիտասարդ հասակում՝
 Հոգով սրտով անվեհեր,
 Երիւն եռում երակում,
 Հայրենիքի պաշտպան էր:
 Հայ-թրքական կռիւում,
 Ուր մահ-սարսափ էր տիրում,
 Զինուոր դարձած մեր գիւղում,
 Զէնքը ձեռքին միշտ հսկում:
 Ինձ վիճակուած էր գնալ,
 Չուշու բերդի մէջ մնալ . . .
 Վերջի հրաժեշտ իմ Սօնին,
 Առ ժամանակ հեռանալ:
 Իմ թշնամիք հնարում,
 Սիրուհուս սուտ լուր բերում,
 Ինձ սպանման բօթ յայտնում,
 Ամբողջ գիւղում տարածում:

Նա արուական հագստում,
Հերոսաբար զինվում է.
Առանց մէկին յայտնելու.
Ե... քաղաքն է գիմում:

Գտնելու իմ գերեզման,
Թափել աբցունք իմ վրան,
Ապա կամաւ զոհ դառնալ,
Ինձ հետ հողում միանալ:

Լիսագօրում թուրքերը՝
Այդ խուժաղուժ ցեղերը,
Բռնաբարում են նրան
Կուրացնու — մբաց թողում:

Եւ գուգարար նոյն օրում,
Հայ-թրքական սահմանում,
Կեօհար-աղի ձորակում
Ես թրքերի ձեռք ընկնում

.
.
Կուրացնում. . .

Սօնան և ես կոյր դարձած,
Հայից, թուրքից խիստ զգուած,
Սուրբ պահելով մեր երգում.
Տաթև վանքում ենք ապրում:

ՂՈՒԿՍ XVIII ԳԼՈՒԽ 8 տ.

Ո՛վ դու անսահման անիմանալի,
Ահեղ բնութիւն, յաւերժ կենդանի,
Մարդկային մտաց անհասանելի,
Այսօր դարձար դու, մեզ շօշափելի:

Լոյս ի յայտնութիւն համայն աշխարհի,
Ոյք ունեն առ Քեզ հաւատ կենդանի,
Կը սլանան դարեր կը փոխվեն ազգեր,
Բայց միշտ կը երգվի «Խորհուրդ մեզ սքանչելի»:

Աւաղ այդ երգեր են կրկնութիւններ,
Այժմեան մեր դարում քո սուրբ տաճարներ,
Կանգնած են որպէս, մէն մի մեհեաններ.
Մենք չենք բրիստոնհայ, այլ հեթանոսներ:

Մեռած է հաւատ, հաւատ սու Աստուած,
Ապականութիւն ամէն տեղ տիրած,
Մէք, կարեկցութիւն, մարդասիրութիւն,
Մարդկային ազգից՝ ընդ միշտ վերացում:

Մեր սուրբ ծէս, կրօն են հրեոյթներ,
Չը կան սուրբ հայրեր... դարձած են քուրմեր,
էլ ինչո՞ւ՝ մեզ պէտք եկեղեցիներ,
Երբ չը կան մեր մէջ «հաւատ յոյս և սէր»:

† ԻՍԱՀԱՆ ԺԱՄՀԱՐԵԱՆ

Հարազատ սրդի ապերախտ ազգի...
Մշտատանջ հողով սրտով և մտքով...
Անխոնջ դու մշակ քո շայրենիքը,
Անմեղ զոհ դարձար անողոր սրի:

Սրբապղծութիւն, ապերախտութիւն,
Սոսկալի անթիւ մարդասպանութիւն,
Հայերի ձեռքով փրկչական թվում,
Մեզ ցոյց է տալիս հայոց պատմութիւն:

Մանածիհր իշխան Ռշտունու ցեղից՝
Միջագետքի մէջ եղև բարբարոս.
Անգութ Սանատրուկ Արշակունի ազգից,
Աղուանից երկրում դարձաւ Յուլիանոս:

Խաղալիք չեղաւ սրա չար ձեռքում՝
Սուրբն Գրիգորիս Վատինեան դաշտում,
Սրբոյն Յուսիկայ բրածեծ չարան,
Հայոց թագաւոր Տիրան անիրաւ:

Ապերախտ Պապը չը թունաւորեց
Մեծին Ներսէսի, և կեանքից զրկեց.
Այդպէս էլ և քեզ ողբալի ընկեր,
Սրով խոշխոջեց հայ մարդի ձեռքեր:

Անխոհեմ ազգի օձի դաւակներ,
Որքան ցանեցիք արդար արիւններ,
Դուք ազգի համար դարձաք դահիճներ,
Անիծուին ձեր տոհմ և ձեր սերունդներ:

Անհուն բնութեան մէջ՝ անտես ամպերով,
Պայ ծածկուած էակ մեզ անյայտ թէ ով,
Աստուած ենք կոչում. ունի դատաստան,
Բայց ուշ է պատժում... տեսնում ենք աչքով:
1902

Գրք. Գր. Գր. Գր.

Գրք. Գր. Գր. Գր.



(5-4138)
49

25903-58

ԱՆԳՈՒԹ ԱՐԱՔԾ

Մահեցին դարեր, կանցնին տարիներ,
Դու միշտ սառնարիւն, դու միշտ անտարբեր,
Ձը գիտեմ, ինչո՞ւ հայոց աշխարհում՝
Հայոց երգերում քո անուն յիշում:

Դու նենգաւոր ես, դաւաճան ազգի,
Ամանչում էլ չես, մնում կենդանի,
Հայրենեաց սուրբ սէր չը կայ բեզանում,
Միմիայն թուրքի հոգսն ես քաշում:

Քո աջ ձախ կողմում արձակ ավերում՝
Խոտ ե ջուր քիւրդին մատակաբարում.
Հայոց պատմութեան միջում չը տեսի,
Մի բարիք արած լինիս հայ ազգի:

Ափերիդ վրա՝ կար մէկ ժամանակ՝
Տարածված էին գիւղ աւան քաղաք,
Օսման և Պարսիկ արին աւերակ,
Ամայի դարձար, անհոգ միայնակ:

Ասա ինձ Արարս, ինչ վիշտ պատճառեց,
Ինչո՞ւ այդ աղէտք քեզ չի ներգործեց,
Այժմս էլ դու, առաջվայ նման,
Սառնարիւն դէմքով անում քո շրջան,

Սինա-փաշայի զօրքից սարսափած,
Անգութ Չահ-Ապաս հրաման էր տուած,
«Քշել հայերին տանել Պարսկաստան,
«Ձը մնայ մէկ հայ, որ տեսնի Օսման»:

Իու չէիր վկայ այդ տեսարանին,
Երբ կտրում էին քիթ ալանջ հայիս,
Ստիպում նրանց անցնել քո միջով.
Ասա այդ ժամում, տխրեցիր սրտով:

Ինչո՞ւ պիտ ծածկեմ քո վատթար վարմունք,
Որքան ընտանիք՝ ծերեր և մանկունք,
Ափիդ մօտ կանգնած արտասուք թափում,
Նրանց կոծ և սուգ դու չէիր լսում:

Քո յորձանքի մէջ նրանց հոգձուցիր,
Կանայք աղջիկներ չի խնայեցիր,
Քո պիղծ սրտումը, քո սրովայնում
Այդ դիակներով լեռինք կազմեցիր:

Բայց ինչո՞ւ անփորձ քո միջով անցան,
Անհաւատ Շահի զօրքը անխափան,
Ինչո՞ւ նրանց էլ չի գլորեցիր,
Ալիքներիդ մէջ սատակացրիր:

Քսաները որդ գալը բերաւ նոր վիշտեր,
Հայ-թուրքի կռիւ, մահ և հրդէհներ,

Դարձեալ քո միջով, անցան պարսիկներ,
Եկին քանդեցին մեր սրբավայրեր:

Մնապարծ Արարս, դու մի ամանչիր,
Ասա համարձակ, դու կարող չէիր,
Ալիքներիդ մէջ խեղդել թշնամուն.
Գոնէ, այս անգամ վրէժ առնէիր:

Ինչո՞ւ Կարմիր ծով իւր մէջ ընկղմեց,
Փարաւօնի զօրք, Իսրայէլ փրկեց:
Ինչո՞ւ պապանձված՝ չես պատասխանում,
Անպատկառ ղիֆօք Կասպեան ծով փախչում:

ՍԻՐՏ

Ովկիանոսի անդնդում,
Գետնի, հանքի սրտերում,
Երկրաբաններ են շրջում.
Բնութեան ծածկուած ծոցիցը,
Նորութիւններ յայտ բերում:

Անհուն անեզր կամարում:
Աստեղագիտած միտք թռչում,
Ու բիւր անթիւ մարմիներ
Դաշնակցաբար են լողում:

Արեգ, Բազումք և Լուսնեակ,
Փայլածու, Մարս, Արուսեակ,
Աչքի անտես մոլորակ.
Դարձան մարդկանց հպատակ:

Սիրտն է մարմնոյ մէկ անդամ,
Ունի անդունդ անսահման,
Նրա կշիռը շատ չնչին,
Բայց անհաս է մեր մտքին:

Յ. Ժ.

ՓՍՐՈՍ.

Մինչ դեռ չը կայիր ծովի եզերքում,
 Մութ ծովի վրա սարսափ էր տիրում,
 Որքան թշուառներ, հաց հայթայթողներ,
 Ալիքների հետ տիւ գիշեր կովում:

Չողջողուն աստղեր երկնքի ծովում.
 Ճանապարհ ցոյց տալ չէին կարենում.
 Խեղճ ձկնորսներ նաւերի վրա,
 Անել վիճակում անդունդ գլորվում:

Խումբ խումբ կանգնած են այնտեղ եզերքում,
 Ազրաւ ցնտանիք նրանց սպառում.
 Վաղ արշալոյսին խորտակված նաւեր
 Ծովի ափի մօտ անտէր տատանվում:

Այսօր դու կանգնած նաւաւանգստում,
 Էլբերտրական լոյս ես սփռում,
 Էլ երկիւղ չունեն կատաղած ծովից
 Մոլորված նաւեր առ քեզ են գիւմում:

Այո գիւմում են աչքեր քեզ ուղղած
 Գոհակներ ալիք մըշտ արհամարում...

. . . . ին.

Պայծառ էր այն օր, խնդում էր և ծով,
 Ամպեր չը կային կապոյտ երկնքում,
 Զոգենաւի մէջ իմ գերդաստանով,
 Անհուն բնութեան տեսքով զմայլվում:

Դէպի հիւսիսը ծովի ձախ կողմում,
 Հրաշալի բնութեան տեսարան բացվում,
 Բարձրաբերձ լեռանց անտառների մէջ,
 Մեր աչքի հանդէպ մէկ վանք երևում:

Հոյակապ շէնք էր, գմբեթ ոսկեգօծ,
 Ճարտարապետի հրաշալի գործ,
 Խաչը փայլում էր նրա գագաթին,
 Հրճուանք պատճառում ճանապարհորդին:

Այդ սրբավայրը յանուն սուրբ Կուսին,
 Ուխտատեղի էր նաւաստիներին,
 Այդ վանքի գործած անթիւ հրաշքներ
 Տարածված էին շրջակայ գիւղեր:

Լուսատու փարոս նրա աջ կողմում,
 Ծովի կրեսին լոյս էր սփռում,
 Ալեկեծութեան հանձնամերում,
 Ուղևորներին յոյս էր... ներշնչում:

Յանկարծ երկնքում սև ամպ երևեց,
Ջրջմուխկ հրոյ նման տատանվեց,
Յողդողղ բնութեան անսանձ կապրիզներ
Մէկ ժամվայ միջում ամէն ինչ փոխեց:

Երկինք և երկիր խառնված միմեանց հետ,
Մեր շոգենաւր կորցրեց իր յետք:
Կայծակ, որոտմունք, հեղեղ, ուրազան,
Նաւին դարձրին սէկ թափառական,

Կատաղած ալիք մեր նաւ գլորում,
Կրկին վեր հանում, կրկին գլորում,
Տախտակամածի վրայ անզգայ
Ընկած էինք մենք, ձայներ արձակում:

Անխոնջ նաւապետ ծովի հետ կռվում,
Նաւաստիները կեանք չեն խնայում,
Փրկութեան նշոյլ, ազատութեան ելք,
Անգութ բնութիւն մեզնից զլանում:

Ճոզենաւի դեկ արդէն խորտակված,
Առասանները միմեանց ոլորած.
Նաւի բեւեռներ տախտակից զատված,
Կոնքեր և կայմեր ցիրուցան դարձած:

Հայելու պէս ծով, սար և ձոր դարձաւ,
Մեր շոգենաւր անդունդը ընկաւ,

Ալիքների մէջ մէկ լոյս թափանձեց,
Մեր մեռած սրտում նոր հոգի փչեց:

Նոյն լոյսը կրկին խաւարի փոխվեց,
Ծովի կոհակներ նրան կլանեց,
Դարձեալ նոյն լոյսը փայլեց երևեց,
Մեր մեռած սրտում նոր յոյս արծարծեց:

— Թշուառ ուղևորներ, քաջասիրտ եղէք,
Ասեց նաւապետ այնտեղ նայեցէք:
«Ձէք նկատում դուք փարոսի լոյսը,
«Էլ մի կորցնէք ձեր հաւատ յոյսը.
«Արդէն հասած ենք նաւահանգիստը,
«Մեզ մահի ձեռքից ազատեց կոյսը:

Վաղը արշալոյսին Տիրամօր վանքում,
Ճանապարհորդներ ծնկաչոք դիրքում,
Արցունք թափելով իրենց աչքերից
Օրհնում են կուսին մումար ձեռքերում:

ԿԵԱՆՔԻ ԱԼԻՔՆԵՐ

Աշխարհիս մէջ ամէն բան
Յնթակայ է փոփոխման.
Այսօր պայծառ է երկինք,
Խնդում դաշտեր և լեռինք:

Գու տեսնում ես երկնքում,
Աստեղներ են շողշողում.
Փոխուեց բնութիւն մէկ ժամում.
Մըրիկ, կայծակ, որոտում:

Այսօր քաջառողջ զուարթ,
Արձանի պէս կանգնած մարդ,
Գողիաթ է թէ Սամսոն,
Հսկաների մէջ միակ:

Վաղը հալումաշ դարձած,
Ամբողջովին քայքայված,
Երրորդ օրում լսում ես.
Որ մեծ հսկան է մեռած:

Գիտունների շարքերում,
Բօմանների հեղինակ
Auréole է Փրանսիայում,
Իրեն ազգին փառք, պարծանք:

Քաղաքից դուրս դաշտերում,
Մանուկի պէս լաց լինում.
Հասակաւոր է այդ մարդ,
Դարձած թշուառ մէկ էակ:

Հարցնում են մէկ մէկից,
Ո՞վ է այդ մարդ խելագար,
Իմացվում է հսկողից՝
Հեղինակ է...*) այդ թշուառ:

Համեստ երգիչ հրաշայի,
Ձայն ունեցող սոխակի,
Կար ժամանակ այդ Madone
Մէկ մագնիդ էր թատրոնի:

Անկողնու մէջ է պարկած՝
Անբուժելի թորախտով,
«Պրաւօ» կանչող սիրահար՝
Այժմ նրան մոռացած:

Պատկերահան հռչակված,
Համայն բնութիւն նկարած,
Արծուի աչք ունեցող,
Վաղը տեսնում կուրացած:

Չատ փափկաւուն մանուկներ.
Ընտանիքի անդամներ...

(* M. P.

Անդորր խաղաղ սրտերով
Անցուցանում են օրեր:

Բազդի անիւր փոխուեց,
Ամենայն ինչ քայքայվեց,
Խեղճ ընտանեաց մէն մէկը
Թշուառութեան ենթարկվեց:

Համեստ սիրուն մէկ տիկին,
Հաւատարիմ ամուսին,
Դու սիրում ես կաթոգին՝
Յանկարծ փչում է հոգին:

Գը գոյ մէկ օր կը մեռնես,
Դերդաստանի դու հայր ես,
Ձաւակներիդ ոչ մէկը
Չի բռնի քո նուժիդ ղեկը: *ա*

Աշխարհս է որպէս ծով,
Տառապանքները ալիք,
Իւրաքանչիւր մարդ նաւակ,
Այն ալեացը խաղալիք:

Գործիր անխոնջ և անբուն,
Որքան կամիս լեր արթուն,
Անողոր է բնութիւն
Չը կայ մէկ բան հաստատուն:

ԲՈՂՈՔ

Տեւի՛ն է միշտ այս դառն վիճակ,
Չալիտ սպառվին պատիժ երկնաւաք,
Տոչորում են ինձ, աղէտներ այս քան,
Առանց տանելու ինձ ի գերեզման:

Որոնց պատժում ես, թողում կենդանի,
Որոնցից մահը շրջում է հեռի,
Այդպիսեաց համար. անողոր երկինք,
Դո խստութեանը մէկ վախճան չունի:

ՉՈՐԸՅԸԾ ԿԱԴՆԻ

Կար մի ժամանակ այս խիտ անտառում...
Ճանապարհորդին աստուած երևում,
Անց դարձ անողներ իմ ստուերի տակ,
Գիշեր ու ցերեկ միշտ պատուարվում:

Արհաւիրք բնութեան չէին յանդգնում,
Խաղալիք շինել ինձ իրենց ձեռքում,
Աւաղ, շուտ անցան այն քաղցր օրեր,
Այսօր ամեն մարդ ինձ արհամարում:

Նայում եմ շուրջս... չունիմ մէկ ընկեր,
Ամեն տեղ ծաղիկ և կանանչ ծառեր,
Մի՛թէ այրվելու էլ չեմ արժանի,
Որ կտրեն կեանքիս արդէն փթած թել:

ԵՐԿՈՏԱՆԻ

Մեղրաճանճների տասնեակ հազարներ,
Իրենց թևերով օդն են շարժում.
Քո շուրջը շինած անթիւ փեթակներ.
Դու անշարժ կանգնած նրանք չեն խայտում:

Անցնում փողոցով տեսնում ես շներ.
Դու միշտ լսում ես նրանց հաջոցներ,
Քո ուղիղ հանդարտ ծանրաքայլ գնա,
Մի նետիր քարեր քեզ չեն վնասում:

Եւ մինչև անգամ, այն խայթիչ օձեր
Քո ստուէրիցը փախչումեն, թագվում,
Նրանք զուբ տեղից չեն թափում թոյներ,
Երբ նրանց հարուած չես հասացանում:

Կան երկոտանիք՝ անգութ էակներ...
Որոնց սքտերը դարձած են քարեր,
Կարիճներիցն էլ սարսափելի են.
Դուշակիր սկզբեր են այդ հրեշներ:

ԱՇԽԷՆ ԵՒ ՄԻՉԱ.

Մայրիկ, ինչո՞ւ մեր Աշխէնին
Ծաղիկներով ծածկեցին.
Նա քնած էր, չի իմացաւ,
Մէկ արկղի մէջ դրին.

Աստ՛ մայրիկ, Աշխէնիկին,
Մուգիկայով ո՞ւր տարին.
Ինչո՞ւ լուռ ես, լաց ես լինում,
Էլ չես լսում քո Միշին:

Ընկեր չունեմ, էլ չեմ խաղում,
Ես նրան եմ սպասում,
Երբ կը՝ գայ տուն սիրուն քոյրս,
Ինչո՞ւ դու ինձ չես ասում:

Մայրիկ, աստ՛, թէ չէ գալու,
Ես կը գնամ նրա մօտ.
Հայրիկը, դու միշտ տխուր էք,
Գատճառը ինձնից ծածկում էք:

— Նա այնտեղ է, երկնքումը,
Ու աստեղներ են փայլում,
Միշտ՝ քոյրդ ասող է դարձել,
Վերևիցն է մեզ նայում:

Մենք էլ մի օր այնտեղ կը լինենք,
Աշխէնի հետ կը շրջենք,
Գու էլ նրա հետ, կը խօսաւ,
Ես և հայրիկ կը նայենք:

— Թէ այդպէս է մայրիկ, լսի՛ր,
Թո՛ղ քո լացը, ծիծաղի՛ր,
Ծաղիկներով ինձ զարդարի՛ր,
Չուտով նրա մօտ դրկի՛ր:

Охтенскій пороховой заводъ.

Մտայոյց նստած սենեակիս միջում,
Նայում եմ բնութեան, երբէք չեմ հրճվում.
Զր կան սար լերինք, ոչ բլուր ոչ ձոր,
Օխտան է միայն ծանրաբալ հոսում:

Մեռած է այդ գետ, ձայն ձուն չէ հանում,
Որպէս մէկ կանգնած ջուր է երևում,
Գեղնագոյն ջուր է, անախորժելի.
Բայց վրան անթիւ նաւեր են շրջում:

Լուսամուտիս դէմ գետի միւս ափում,
Խիտ և ընդարձակ անտառ երևում,
Նայի՞ր ուր կամիս, են գործարաններ.
Ուր թշուառ մարդիկ բլախնք են թափում:

Ծածկված է երկինք մուսլ ամպերով,
Գարծարաններից վիժած ծուխերով,
Կարօտ ես մնում կապոյտ երկնքին,
Նեխված է օդը ծծումբահոտով:

Գիշեր ու ցերեկ այդ զաւօղներում,
Մարդկանց կեանքի դէմ նիւթեր պատրաստում,
Ռուսներ, գնդակ, վառօտ նորահնար,
Ամէն մարդ գիտէ, թէ ինչու համար:

Ամբողջ օրուայ մէջ սուլոցի ձայներ
Խլացնում են մարդու ականջներ:

Եւ անեղակոչ թնդանօթներով
Զտուած նիւթերից անում են փորձեր:

Թէ ինչ գաղտնիք կայ, ես չեմ հասկանում,
Ամերիկ—Եւրօպ կօնգրէսներ կազմում,
«Թողել պատերազմ արիւնհեղութիւն».
Մինչ դեռ պիտութիւնք թոյն են պատրաստում:

ИСТЪ-ИСТЪ-ներ
... նի:

Демократъ է խիստ Соціялистъ,
Վարրով բարի, բայց չէ thesite,
Ի՞նչ անուն տամ, այդ չը գիտեմ
Հայ է, բայց չէ nationaliste

ИСТ-ИСТ բառեր մեր այս դարում,
Ամէն մէկ մարդ գործ է ամում,
Թէ հասկացող, և թէ տգէտ,
Իրեն ИСТ-ИСТ է անուանում:

Վաթսունամեայ՝ հասակ առած,
ИСТ-ИСТ-ներով շրջապատված,
Միշտ լսում եմ նրանց խօսքեր,
Փառք տամ Տէրին, ապուշ գարձած:

Ամէն մէկ ИСТЪ фракція ունի,
Չեն Իսայի, ոչ Մովթանի,
Բարբելոնեան նրանց բարբառ,
Չայներ հանում բուէների:

Октябрист կամ монархист,
Թէ Journaliste կամ anarchiste
Իւրաքանչիւր իրեն օգտին,
Գրում, տպում, բղաւում խիստ:

Opportuniste, Communiste ներ,
Ատում են ազգ ու ծնողներ.
Իստերը ունեն մէկ նպատակ.
Փառք ու պարծանք... և սկիւններ:

Թշուառ ամբոխ, խեղճ մարդիկ.
Դրանց յուսով պիտի ապրիք.
ИСТ-ИСТ-ներից հեռու կացէք,
Սթափուեցէք, ձեր աչք բացէք:

Забастовк-ից խուսափեցէք,
Չեր հին հաւատ պինդ պահեցէք,
Չեր մանուկներ հաց են ուզում,
Նրանց սնունդ հայթայթեցէք...

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ

«Ունայնութիւն, ասաց ժողովող,
«Ամենայն ինչ ընդունայն,
«Եւ մարզն ի հող:

Գոյութիւն մարդու հոգոյ
Զատ նման է ճրագի լուսոյ.
Փշիր նրան՝ անյայտացաւ,
Ո՛ւր գնաց նա, և ո՛ւր կորաւ.

Որքան մարդը է կենդանի,
Ասում են, կայ և մէկ հոգի,
Դադարում է մարդու շունչը.
Գուցէ հոգին է այդ շունչը...

Սակայն մարդիկ մերկ են ծնվում,
Թագաւորները պալատներում,
Ստրուկները ախոռներում,
.

Մահը մանգաղը բռնած ձեռքում,
Մեծ և փոքր չէ որոշում,
Մերկ էլ տանում սեղ գլորում,
Թէ հոգի մէջ և թէ ջրում:

Եստ անգամ էլ մեկ հրդեհում,
Գազանների առաջ քցում.

Ունայնութիւն չէ ամէն բան,
Մարդիկ թշուառ չեն բան անբան:

Կորան ազգեր, անյայտացին,
Նորերը եկին տեղ բռնեցին,
Դարձեալ կը գան, կերթան ազգեր,
Մարդիկ կը լինին, որպէս ստուեր:

Ունայնութիւն-ունայնութեան,
Ամենայն ինչ է ընդունայն:

ԱՆՈՂՈՔԻ ՆՈՒԹԻՒՆ

Ո՛ւմ աղօթում, արցունք թափում,
Տիւ և գիշեր սնկազար.
Գու կարծում ես թէ բո սրտում,
Եղած վշտիդ կը լինի ճար:

Թշուառ ծնող... յոյսդ կտրիր,
Աչքերդ ի վեր համբարձիր,
Ո՛ւր է Աստուած, զէ մտածիր,
Նրան երբէք չես գտնիլ:

Գու տեսնում ես երկնքում՝,
Սիրուն աստղեր են փայլում.
Արեգակը յոյս է տալիս.
Լուսինը անհող մեզ նայում:

Հազար անգամ երկրագնդից,
Մեծ մոլորակ կայ այն տեղ.
Միլիոն մղոն միմեանցից
Հետու, գու կարծում ես կից . . .

Սնթիւ են այդ մարմիններ,
Յոյժ անգոր են մեր մտքեր,
Գանել բնութեան գաղտնիքներ:

Թէ սիրելիդ կը մտնի...
Կամ թէ մնայ կենդանի,
Թշուառ մարդիկ, ծնողներ՝
Այդ կապ շունի աղօթքի:

Տէրութիւններ են դիմում,
Միմեանց վրա յարձակում,
Խաչ, սուր, բռնած ձեռքում,
Խեղճ մարդկանց կոտորում:

Ասում են, մեծ է Աստուած,
Նրա իրենց յոյս բռնած,
Ինչ սոսկումներ այդ կովում,
Տես են դառնում ջախջախված:

Մէկը աղքատ ու բարի,
Ստրուկ դարձած տաճարի...
Ջէբի կոպէկ տամ մօմի,
Ծխում կնտրուկ—հալուէլի:

Միւսը հարուստ անաստուած,
Խեղճ և գութ կորցրած.
Մինչև անգամ հայրասպան...
Բայց մարդկանցից միշտ յարգված:

Թէ Պրահմա, թէ Պուտա,
Մահմեդական, քրիստոնեայ,

Հնդիկներ, ու Հրէայ,
Մէկ սերունդ են Ազամայ:

Միլիոնաւոր ամբոխին՝
Նրանց մէն մի խնդիրքին,
Ո՞ւր է Աստուած չը գիտեմ,
Նա չէ լսում ոչ մէկին:

Բնութեան օրէնք անողոք,
Նա չէ լսում մի բողոք,
Ո՞վ բանական ողբալի,
Քեզ վրա դիր միշտ քո հոգ:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Հերոսի պէս գէմք ունի,
Վիճակի մէջ մի մտնիր,
Գրպանումը փող չունի,
Հպարտութեան մի նայիր:

«Վայ էն հալին» ապրում է,
Ճատ անգամ նա քաղցած է,
Մէկ սենեակի մէջ փակված,
Բուքից, ցրտից խուսափված:

Երկար գիշեր հիւսիսում,
Տարօրինակ մէկ կեանքում,
Զբաղմունքին չափ չունի,
Լոյս ճրագի կարօտում:

Երբեմն մէկ տեղ նա նստած,
Ուրքը ոտքովը քցած,
Ծխախոտը բերանում,
Աչքը լուսնին բեւաւած:

Նա ոչ որի շի տեսնում,
Բնութեան հետ է մաքառում...
Եւ իր թշուառ վիճակը,
Գժգոյն լուսնին է յայտնում:

Վերացական utopi-ով՝
Խորասուզված իր մտքում,
Դու անցնում իր մօտով,
Նայում նրա զգևանքով:

«Ե՞ր չը տուաւ քեզ յարգանք,
Չը վերցրաւ իր գտակ,
Անում ևս դու բամբասանք,
Քցել իզուր նրա վարկ:

Թորից կպած սաստիկ հազ՝
Նա դառնում է հայրենիք...
Հալվում դառնում որպէս մագ,
Եւ հուսկ յետոյ որդանց մաս:

Տասը, քսան տարիներ,
Դժբաղդ և սև շատ օրեր,
Լցված սրտով շատ վիշտեր,
Տանում են մեծ հերոսներ:

Ոմանց մահը գլանում,
Չատեր անգործ թափառում,
Պրօտեկցիեայի միջոցով՝
Քիչերը պաշտօն են գտնում:

† ԵՐԱԶ

Գերեզմանական լուսթիւն տիրում,
Անհուն տիեզերքի անեզր ծոցում.
Գարնան զիշեր էր, լուսինը դժգոյն,
Չը կար ոչ մի տեղ, ոչ ձայն, ոչ շարժում:

Դարձած նետահար գագան գաշտերում,
Մահաբեր վէրքով աստ անդ թափառում,
Անցած օրերիս և տարիներիս,
Հին հին յիշատակ սիրտս կեղեքում:

Մեռած էր բնութիւն, մեռած էր իմ սիրտ,
Միմեանց համանման, միմեանց զուգատիպ,
Ինձ ցանկալի էր խաւար տարտարոս,
Քան մեռած բնութեան՝ ծոցում մեռած սիրտ:

Հորիզոնի մէջ երկրի վրա,
Տիեզերքի մէջ երկնքի վրա,
Երևում էին ինձ խառնաշփոթ,
Ամենայն մի ինչ տալինու-վրա:

Միայն ևս չէի տատանված զիրքում,
Անբան անասունք, անշունչ էակներ
Մինչ ճեղքված գետինք առ Տէր բողոքում,
Անզուժ բնութեան կամքին ենթարկվում:

Դարկացած էին դաշտեր անտառներ,
 Չոր ցամաք դարձած առուներ գետեր,
 Չէր երևում ամպ, չէր հնչում զեփիւռ.
 Չէր լսվում արտոյտ-սոխակի ձայներ:

Աննշոյլ մռայլ էին աստղեր,
 Մթնա լորտի մէջ մէկ թոյն մահաբեր,
 Սաստիկ վարակում շնչաւոր անշունչ
 Մեր երկրի վրա եղած էակներ:

Մեր երկրագնդին էր արդեօք վախճան,
 Մեռած էր արդեօք վարպետ բնութեան,
 Գուցէ առ աչօք էր այդ երևոյթ,
 Սակայն ինձ թվում, որպէս իրական:

Իմ աչքիս դիմաց հեռու անտառում,
 Խաբուսիկ աղօտ մէկ լոյս երևում,
 Դիմում եմ այն տեղ, մի այլ տեսարան,
 Հարիւրամեայ կօր կոյս մատուում աղօթում:

Նա ինձ չի տեսնում, արցունք է թափում,
 Աշխարհի համար Փրկչին աղերսում.
 — «Սրսկիր, Աստուած, գթութեան քո ցող...»
 Անխիղճ մտրդկանց սրտում և հոգում:

Ուղարկիր անձրև, կեանք տուր բնութեան.
 «Յոյց տուր քո ուխտի... աղեղ հաշտութեան»

«Թող չը պատժվին մեր մեղքի համար,»
 «Շնչաւոր... անշունչ արարածք համայն»:

Հրացանի ձայներ ականջիս դիպչում,
 Երագս կիսատ՝ յանկարծ արթնանում,
 Փամբ չորսն էր մէջ.
 Երեք էակներ կեանքից են զրկվում:

ԳԵԳԴԵՄԲԸՐԻ 24

Գ... քաղաքում, ն... պրօսպեկտում,
Անթիւ մարդիկ են շրջում.
Էլէկտրակառ լոյս սփռած՝
Ցուրտ-բուք, սաստիկ հողմ փչում:

Օտոմօբիլ, պէս պէս կառքեր՝
Չգուժ տանում բուրժուանեց,
Զքեղ ու տաք հագուստներում,
Աւրախ, անհող-անտարրեր:

Ատոազայթված մագաղիններ,
Ուր կային շատ կլիենտներ,
Վաղվայ համար առնում էին,
Թողում այն տեղ հարիւրներ:

Քայլում մէկ մարդ միջահասակ,
Ցուպը ձեռքին մրայնակ.
Հիւանդ էր խիստ, մեղանխօլիկ,
Ոտերը կազ անկոշի:

Ինձ թվում է օտարական,
Թշուառ, գուցէ ժան-Վալթան,
Նկատում եմ խեղճ մարդուն՝
Հետևում էր պ

Սառն օդից գոյնափոխված,
Մտաւ մէկ տեղ սարսափով,
Մնաց կաղնած, և մոլորված,
Ուր վաճառում էին «Հաց»:

Մտաբերեց իր որբ մանկանց
Նայեց իր շուրջ այլայլված,
Տեսնող չը կար, գաղտնագողի
Նա վերցրաւ մէկ «Սև հաց»:

Սողաց այն տեղ օձի նման,
Հետախուզող սատանան.
Բռնեց օձքից, ձգեց իւր հետ...
Չը կար նրան մէկ պաշտպան:

Ա . . . թ.

Ձեռքերը խաչած արցունք թափում,
Ձունի հանգիստ ու դադար,
Ձը կայ մէկ կին մէկ արարած՝
Նրա նման շատ թշուառ:

Դժբաղդութիւնը ձեռք չէ քաշում,
Երբ նա մէկին կոչում է,
Իր խստութիւն շարունակում,
Չի մեռցնում, տանջում է:

Խեղճ կինը հէնց սկզբից
Սե հազուատի մէջ մնաց.
Երբ հասակը տասն չորսից՝
Տասնհինգից չէր անցած:

Ամուսնուն հետ միայն ապրեց՝
Քանի ամիս, քանի օր,
Գոնէ շրջան չի բոլորվեց,
Ելրի մնաց գլխակօր:

Այն այրի, տասնեակ տարի,
Սեւագեատ և արտում.
Ունէր միակ արու որդի,
Աչքի լուսի մէջ պահում:

«Փառք քեզ Աստուած», միշտ կրկնում էր,
Հրճուանքը զգում, աղօթում.
Երբ իր գրկում նա տեսնում էր
Փափիկի մանուկը մեծանում:

Անցան տարիք, շրջան փոխուեց,
Հասունացաւ սիրելին,
Ուսում տվաւ և պսակեց,
Վերջը հասաւ փափագին:

Աւաղ, աւաղ չի տեսցին
Քաղցր տարիք և օրեր,
Թշուառ այրուն շուտ խեղդեցին
Անգութ բաղդի ճիրաններ:

Մարգասէր և ազնիւ տղին
Սպանեցին անխնայ,
Կրկին հարուած, սուգ վերստին,
Երկրորդ շրջան երկրորդ մահ:

Թէպէտ դժբաղդ նա հարուստ էր
Մեծ անուն, գոյք, կայք ունէր,
Բայց հայ-թուրքի ընդհարումներ,
Դարձան վերջի դահիճներ...

ԾԱՂԻԿ

Երբ դու չը կաս լերանց լանջում,
Պարտէզներում և այգում,
Ինձ հաւատան չքնաղ ծաղիկ
Չը կայ զգացմունք իմ սրտում:

Բնութեան մէջ, երբ քո սիրուն
Տեսրիդ փայլուն գոյնզգոյն,
Աչքի առաջ չի երևում
Մարդիկ դառնում անասուն:

Աստուած քո մէջ չի խնայել,
Հոտաւէտ շունչ ներշնչել,
Եւ բոյսերի դշխոյ գրել,
Տարազներով զարդարել:

Թէ օրիորդ և թէ տիկին
Ունեն քեզ միշտ կուրծքերին,
Նորապսակ կոյսի գլխին,
Փայլ բաժանում ամէնին:

Թէ սրբավայր տաճարներում,
Թէ վեհանձանց սեղանում,
Փառքով պատուով զահաւորված
Տեղ ես բռնում վազերում:

Գուցէ ուրոյն մխիթարանք
Կամ արտասուաց առատ հոսանք
Դազաղների վրա տեսքդ,
Տխուր մօր տամ սփոփանք:

Սիրուն ծաղիկ, քեզ սուրբ պահիր
Չեռքերից ձեռք... մի շօշափվիր,
Դու անարատ և կոյս մնան,
Տերևներիդ տակ ծածկուիր:

Թող անմեղ ձեռք քեզ կտրի,
Տանի իրեն կուրծքին սեղմի,
Անուշ հոտովդ միշտ զմայլվի..

1905.

Բնութեան մէջ հրաշքներ,
Կատարվում են շարունակ.
Ահեղ բնութեան գաղտնիքներ...
Են զանազան նօտաներ:

Ներգաշնակ են բնութեան,
Սարսափ ազդում մարդկութեան...
Ահեղատես երևոյթ,
Գուցէ բարիք են մարդկանց...

Անթիւ՝ են և տարազան,
Երևոյթներ բնական...
Ահ ու սարսափ կամ հրճուանք...
Յաճախ ներգործում մարդկան...

Առաւօտեան արշալոյս,
Երեկոյեան վերջնալոյս,
Եւ երփնագոյն աղեղը,
Մոլորվածին տալիս յոյս:

Ես տեսել եմ հիւսիսում,
Հրափառ երկինք գիշերում,
Բնութեան շքեղ այդ պատկեր,
Հիւսիսափայլ են կոչում...

Կայծակ, մրրիկ մառախուղ,
Երկրաշարժներ, հրաբուխ,
Հեղեղ, ժանդախտ, որոտմունք
Մեզ ներգործում մի սոսմունք...
Որքան աղէտ և սոսկում,
Հայնատարած աշխարհում...
Տարօրինակ երևոյթ
Միշտ կը տեսնենք մեր կեանքում...

ԽՈՒԼԻԿՅԱՆՆԵՐ ԵՒ ԲԱՇԻԲՈՒՋՈՒԿՆԵՐ

Այդ երկուորեակ ազգով՝ հաւատով
Չատ տարբեր են և՛ ըրենց գոյներով.
Մէկը գրում է աշխց գէպի ձախ,
Միւսը ձախից այ կարմիր թանաքով...

Ծովերը կարմիր... կարմիր են երկինք,
Կարմիր դարձած են և կանաչ գետինք,
Ամենայն մէկ տեղ մարդկերանց վրա,
Հոռում թափում են դառն մահու քրտինք:

Գողգոթա դարձած քաղաքներ-աւան,
Ծովեր ծառայում որպէս գերեզման,
Չար Յուլեանոսներ յարութիւն առած,
Տեսնում ենք անվերջ մահուան տեսարան:

Դուրս գանք միասիրտ երկոցունց առաջ,
Ջրահաւորված գոյն գոյն դրօշակով,
Դէ՛ հղբայրք, յառաջ, յառաջ ընդ յառաջ,
Թող մեզ գորաւիգ լինի Աստուծոյ աջ:

Դժոգքի մէջ ենք որպէս Հռոմում,
Թռչունի ձայնից անգամ սարսափում,
Բաշիբուզուկներ և խուլիգաններ
Իրենց խումբերով աշխարհ սուերում:
Դէ՛ հղբայրք...

LE GENIE DE LA TURQUIE

Էլ չեմ մտնուկ անբարբառ,
Չեմ կաշկանդված և յիմար,
Անցան օրեր մանկութեան.
Դարձեալ վիճակ իմ թշուառ:

Ես մէկ ոգի առոյգ կի՛ն...
Ունեմ դրօշակ իմ ձեռքին
Լուսնեակակիր աստղանիշ,
Չքանչան իմ ազգին:

Իմ սուլթաններ խնամատար,
Կործանեցին ինձ իսպառ,
Այսօր խաչած իմ ձեռքեր.
Չունեմ մէկ ուժ փրկարար:

Բայց ունեմ ևս շատ որդիք,
Թափառական և մարտիկ,
Ձէնքեր բռնած ձեռքերում՝
Գոռում են և բղաւում...

«Բաւ է, բաւ է, ով մայրիկ,
«Ազատութիւն ենք խնդրում,
.
.
.
«Թող կոտորվին թշնամիր:

«Ունենք մէկ յոյս միայնակ,
«Միութիւն, ուժ անսայթակ,
«Ելնենք առաջ թշնամեաց,
«Զեռքիդ կարմիր զրօշակ:

«Սուր, հուր, զրահ սրբազան,
«Թող լինեն մեզ ախոյեան,
«Տուր հրաման, թշուառ մայր,
«Խորտակել ոյժ բանութիւն:

բանութիւն

ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔ

Երբ քայքայվեց իմ կեանքի նաւակ,
Երբ փոխուեց նախկին օրերիս վիճակ,
Բազդը ինձանից երեսը շրջեց,
Թողելով ընկեր, վիշտ սուգ և տանջանք:

Միտքս թե առաւ շրջեց ամեն տեղ,
Իմ թշուառութեան չը դաւաւ մէկ տեղ.
Քաջ իմանալով ունայն է աշխարհ...
Վերջապէս գտի մէկ դարման գօրեղ:

Ընտելացի ես թոյնալի կեանքին,
Հոգ և հեծութիւն ինձ ընկեր դարձին,
Քրիստոնէական համբերութիւնը,
Մորմոքված սրտիս ներգործում է ուժգին:

ԻՄ ԿՏՈՎԸ

Երբ իմ սիրտս չէ բախում,
Սրեան շրջան կանգ առնում,
Երբ չը կայ շունչ իմ անգում. *u*
Չգիտեմ հոգիս ուր կոչում...

Թող ինձ տանեն գերեզման,
Թող ինձ լափի շար գազան,
Թող ինձ քցեն ծովի մէջ,
Մնունդ դառնամ Կէտ ձկան:

Երբ մէկ հարուստ է մեռնում,
Դագաղը... տաճար են տանում,
Փամերգութիւն կատարում.
Փառքով հողին են յանձնում:

Եւ զուգահետ այն օրում,
Եկեղեցու մէկ խուցում.
Քանի տարվայ ծառայող
Յանկարծ հողին է փչում...

Դիակը դեռ չը սառած,
Դագաղը քաշտամ գերեզման
Քցում մէկ փոս զայրացած...
Որպէս չունից փախճանված...

«Երբ յաւիտեան կը փակվին,
«Արցունքով լի աչքերս,
«Եկեղեցում «գատեա»-ի
«Կարիք չունի իմ հոգին:

«Թող իմ մարմին անփոփվի
«Աղբատների դագաղում.
«Մէկ քահանայ ինձ տանի
«Հողի մէջը թաւալի:

ԻՄ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Իմ հանգիստը հանդիստ չէ,
Ես անհանգիստ պարկած եմ,
Սրտիս հոգոյս վշտերում
Եռում եմ ու տոչորվում:

ՎԵՐՉԱԲԱՆ

Սիրտս տխուր, կեանքս թշուառ, յոյսս
Վաղուան օրի վրայ,
Անցաւ գիշեր, սարսափելի նոր վէրք բուսաւ
սրտիս վրա,
Ո՛հ երանի... հազար ափսոս անցած կեանքիս
անդարձ օրին,
էլ չը կայ յոյս, այսուհետև՝ տեսնել անցած
օրից մէկին:

Միտքս ծով է ալեկոծված, սրտիս մէջը
Թոյնով լցված,
Հոգի չունեմ, մահ եմ ուզում, մահն էլ է ինձ-
նից զզված,
Նայում շուրջս, կին եմ տեսնում, դառն ջրով
աչքը լցված,
Մի արտասովի: Թշուառ դու կին, հոգոյդ հա-
տոր... Թռաւ գնաց:

Այո՛ թռաւ, ուր սլանում մտածների ան-
մահ հոգիք,
Անհուն բնութեան՝ անեզր ծովում ընդ միշտ հանգ-
չում մարդկանց հոգիք,

Կեանքը մահ է... մահը կեանք է, մեզ անյայտ
 է՝ այդ վեհ զազտելիք.
 Երբ մեռնում ենք, նոր հնր ծնվում, մենք կը
 տեսնենք մեր սիրելիք:

Դիւիջան 1909 Օգոստոսի 21

Վ Ե Ր Զ



Յ Ա Ն Կ

	ԵՐԵՍ
1. Խրիստինէին.	2
2. Օր և գիշեր.	4
3. Ծովի բողոքը.	6
4. Երկու զազադ.	8
5. ին.	10
6. 1905 Արցունք և խաչ.	11
7. 1905 Թիւր.	12
8. 1905 Սէր և երգում.	13
9. Ղուկաս աւետարան.	15
10. † Խահակ Ժամարեան.	16
11. Անգուլթ Արաքս.	18
12. Սիրտ.	21
13. Յ. Ժ. Փարոս.	22
14. ին.	23
15. Կեանքի ալիքներ.	26
16. Բողոք.	29
17. Չորացած կաղնի.	30
18. Երկոտանի.	31
19. † Աշխէն և Միշա	32
20. Охтенский пороховой заводъ.	34
21. ИСТЬ-ИСТЬ-НИ.	36
22. Ունայնութիւն.	38
23. Անողոր բնութիւն.	40

24.	Հայ ուսանողներ.	43
25.	† Երազ.	45
26.	Դեկղեմբերի 24.	48
27.	Ա. . . . Թ.	50
28.	Ծաղիկ.	52
29.	1905.	54
30.	Խուլիգաններ, բաշխուղուկներ.	56
31.	LE GENIE DE LA TURQUIE.	57
32.	Առօրեայ կեանք.	59
33.	Իմ կտակը.	60
34.	Իմ տապանաքարը.	62
35.	Վերջաբան.	63

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր .

	Սխալ	Ղղիղ
11.	Եր. 15. Տ. Թիւրք	Թուրք
14.	» 12. կուրացնու մ	կուրացնում
15.	» 8. մեզ	մե
16.	» 9. Մանածիհը	Մանածիհը
16.	» 11. Արշակունի	Արշակուն

2m

24604



2013

